

Ալեքսանդր Ս. Զալալյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՐԿՄՈՒՅԹ
ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՏԻՊԻ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ***

Բանալի բառեր – Ակոռի, Աքորի, Բգավոր, Բագավան, զույգ ազատ կանգնած մույթերով գմբեթավոր դահլիճ, Իվանե Երկայնաքազուկ, Պղնձահանքի Ս. Աստվածածին

Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի կողմից Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Մասեացոսն գավառում գտնվող իր հայրենի Ակոռի գյուղում 661–667 թթ. կառուցված զույգ ազատ կանգնած մույթերով գմբեթավոր եկեղեցին 7-րդ դարի հայ ճարտարապետության ուշագրավ նվաճումներից մեկն է, որի հատակագծային հորինվածքը հիմք է դարձել 12–13-րդ դարերում Հյուսիսային Հայաստանում ու Վրաստանում հիմնված մի շարք քաղկեդոնական եկեղեցիների համար:

Մեծ Մասիսի լանջերին գտնվող այս եկեղեցուց ներկայումս պահպանվում են միայն հիմքերը¹, քանի որ շինությունը կործանվել է 1840 թ. մեծ երկրաշարժի ժամանակ: Ավերված եկեղեցու հատակագիծը հրապարակել է ֆրանսիացի ճանապարհորդ Դյուբուա դը Մոնպերյեն², որից էլ հետագայում օգտվել է Ղ.Ալիշանը³: Հուշարձանին թռուցիկ անդրադարձել են նաև Թ.Թորամանյանը⁴ և Յ.Ստրժիգովսկին⁵:

Դատելով մեզ հասած բավական սուղ նյութից՝ Ակոռիի եկեղեցին ներկայացրել է գրեթե կենտրոնագմբեթ հորինվածք, ուր գմբեթը հենվում է զույգ ազատ կանգնած և Ավագ խորանի պատի հարթության հետ

*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.09.2014:

1 Տես Հայկական ճարտարապետության պատմություն, հատ. 2, Եր., 2002, էջ 231:


2 Տես Дюбуа де Монперье Ф., Поездка на Кавказ к черкесам и абхазам, в Колхиду, в Грузию, в Армению и в Крым, т. III, Париж, 1840, էջ 456:

3 Տես Ղ.Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 182:



4 Տես Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատ. Ա, Եր., 1942, էջ 216:

5 Տես И. Стржиговский, Архитектура армян и Европа, т. I, Ереван, 2011, էջ 189–190:

Հ (ԺԲ) րարի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014
ՎԷՆ համահայկական համալս



Գծ. 1: Ակոռիի 7-րդ դարի եկեղեցու հատակագիծ



Գծ. 2: Բագավանի տաճարի հատակագիծ

համատեղված մույթերի վրա (Գծ.1): Ոչ ավանդական այս հատակագծային հորինվածքը եզակի է Հայաստանի վաղ միջնադարյան հուշարձանների շարքում, որոնք լուծված են հիմնականում գմբեթակիր չորս ազատ կանգնած մույթերով (Գայանե, Սրեն, Բագավան, Կունայրի):

Յ. Ստրժիգովսկին Ակոռիի տիպի եկեղեցիների շարքում հիշատակում է նաև Աստապատի Ս. Ստեփանոս վանքի եկեղեցին՝ հիմնվելով Երվանդ Լալայանի հրատարակած հատակագծի վրա⁶: Սակայն 17-րդ դարում կառուցված այս շինությունը չի պահպանել վաղ միջնադարի որևէ հետք⁷:

Ակոռիի եկեղեցու ոչ ավանդական կառուցվածքը հիմք է տվել Թ. Թորամանյանին ենթադրելու, որ Դյուբուայի կողմից ներկայացված հատակագիծը չի արտացոլում եկեղեցու նախնական հորինվածքը: Ըստ նրա՝ կառույցն ի սկզբանե հղացված է եղել որպես չորս ազատ կանգնած մույթերով գմբեթավոր եկեղեցի, իսկ մեզ հասած հատակագիծը հետագա վերակառուցումների հետևանք է: Սակայն, եկեղեցու վերակառուցված լինելու վարկածի մերժման օգտին է խոսում հուշարձանի արևելակողմի, ինչպես նաև ավելի վաղ կառուցված, նույնպես քաղկեդոնական Բագավանի տաճարի (Գծ. 2) նույն հատվածի լուծումների համադրությունը:

Ըստ պահպանված շինարարական արձանագրության՝ Բագավանի եկեղեցին, հիմնադրել է Եզր կաթողիկոսը 631 թ. և ավարտել է 639 թ.⁸: Կառուցման սկիզբը համընկնում է վերջինիս կողմից Զաղկեդոնի տիեզերական ժողովի որոշումներն ընդունելու ժամանակին⁹:

Ըստ Հ. Օրբելու՝ հնարավոր է, որ տաճարի կառուցումը Հայաստանում քաղկեդոնականության հաստատման նպատակ է ունեցել՝ ի հակադրու-

6 Տես Ե. Լալայան, Նախիջևանի շրջան, կամ Նախճվան, Թիֆլիս, 1902, էջ 150-154:
 7 Տես Մ.Հարարյան, Աստապատի վանքի ճարտարապետական համալիրը, ՊԲՀ, 1975, N 1, էջ126-138:
 8 Տես И.Орбели, Багананская надпись 639 года, «Избранные труды», Ереван, 1963, էջ 371-387.
 9 Տես Սերետսի եպիսկոպոսի պատմություն, Եր., 1939, էջ 102:

թյուն միաբնակ տրամադրությունների¹⁰: Սրանով է բացատրվում բյուզանդական ճարտարապետությանը բնորոշ լուծումների առկայությունը Բագավանի տաճարի հորինվածքում: Նաև՝ կառույցի բավական մեծ բացարձակ չափերը, ինչը բնորոշ չէ հայկական ճարտարապետությանը: Ճակատային դեկորի իսպառ բացակայությունը, երկայնական ճակատների կոնտրֆորսների առկայությունը և վերջապես Ավագ խորանի մեջ բացվող երեք լուսամուտները նույնպես խոսում են Բագավանի տաճարի հունա-դավան բնույթի մասին¹¹:

Եկեղեցու մեզ հետաքրքրող արևելյան ճակատը լուծված է երեք բազմանիստ դուրս եկող ծավալներով: Թեև հայկական ճարտարապետության մեջ բազմանիստ դուրս եկող խորանները հայտնի են դեռևս վաղ միջնադարից (Եղվարդ, Քասախ, Մրեն)¹², սակայն Բագավանի եկեղեցին համարվել է եզակի՝ շնորհիվ արևելյան ճակատի հիմնական մակերեսից դուրս եկող Ավագ խորանի և զույգ ավանդատների վերը նշված արտաքին եռանիստ ծավալների¹³: Նմանատիպ հատակագծային լուծումները լայնորեն տարածված են և բազմաթիվ են ոչ միայն տվյալ ժամանակի, այլ նաև ուշ շրջանի բյուզանդական ճարտարապետության մեջ¹⁴:

Այսպիսով՝ Բագավանի տաճարի կառուցումից մոտ երեսուն տարի անց Ակոռիում ակնատես ենք լինում նույն երևույթի կրկնությանը՝ ճակատային հարթությունից դուրս եկող երեք ծավալների հորինվածքին: Սակայն ի տարբերություն Բագավանի, ուր Ավագ խորանի հետավորությունը ճակատային հարթությունից ավելի մեծ է, քան ավանդատներինը, Ակոռիում Ավագ խորանն ու ավանդատները ճակատային հարթությունից դուրս են գալիս նույն չափով: Այսպիսով՝ Ակոռիի եկեղեցու հատակագծի հետազոտությունից ակնհայտ է դառնում, որ Բագավանի արևելյան ճակատի հորինվածքը միակը չէ հայկական ճարտարապետության մեջ:

631 թ. Եզր կաթողիկոսի կողմից Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունելուց հետո Հայ եկեղեցին փաստորեն ժամանակավորապես ընդունել էր քաղկեդոնական երկաբնակության ուսմունքը, ինչը մինչև 717 թվականը՝ վեց կաթողիկոսների գահակալության ժամանակահատվածում դառնում է գերիշխող¹⁵: Զվարթնոցի տաճարը կառուցող Ներսես Գ. կաթողիկոսի հաջորդ Անաստաս Ակոռեցին նույնպես հարել է քաղկեդոնակությանը և պատահական չէ, որ Բագավանից հետո այստեղ նույնպես առկա է կառույցի արևելյան ճակատի բյուզանդական ճարտարապետությանը բնորոշ լուծումը: Նման մոտեցումը հնարավոր էր իրականացնել այն ժամանակահատվածում, երբ երկրում տարածված էր քաղ-

10 Տե՛ս И.Орбели, նշվ. աշխ., էջ 115:

11 Տե՛ս Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 297: Տե՛ս նաև՝ Ա. Երեմյան, VII դարում հայկական հուշարձանների կրած մի փոփոխության մասին, ՊԲՀ, 1966, N 4, էջ 152-170:

12 Տե՛ս М. Асратян, Армянская архитектура раннего христианства, М., 2000, էջ 16-18:

13 Տե՛ս Ст. Мнацаканян, Крестовокупольные композиции Армении и Византии V-IV веков, Ереван, 1989, էջ 120-125.

14 Տե՛ս R.Krautheimer, Early Christian and Byzantine architecture, London, 1989, էջ 201-284; С. Mango, Byzantine architecture, Milano, 1978, էջ 35-141.

15 Տե՛ս Գիրք թղթոց, «Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի սակա ժողովոց որ եղեն ի Հայք», Երուսաղեմ, 1994, էջ 473-479: Տե՛ս նաև՝ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 358:

կեղոնական դավանանքը, ուրեմն՝ Ակոռիի եկեղեցին ի սկզբանե իրականացված է եղել մեզ հասած հատակագծային հորինվածքով: Սրանով հերքվում է նաև այն կարծիքը, որ այդ եկեղեցին արևելքից ունցել է ավանդական եռանկյունաձև խորշեր, ինչն անհնար է դիտարկված հորինվածքի դեպքում¹⁶: Ակոռիի եկեղեցու հունադավան լինելու մասին է խոսում նաև կառույցի ոչ ավանդական հատակագծային լուծումը:

Հարց է առաջանում՝ ինչն է ստիպել Ակոռիի եկեղեցու ճարտարապետին խախտել ընդունված չորս ազատ կանգնած մույթերով գմբեթավոր հորինվածքի ավանդական տիպը և ներքին եռամաս տարածությունը դարձնել երկմաս՝ եկեղեցու լայնական առանցքը կենտրոնից տեղաշարժելով դեպի արևելք, որի հաշվին ավելացել է ներքին գավթի մակերեսը: Հայաստանում ժամանակավորապես գերիշխող դարձած քաղկեդոնականության հետևորդները ձգտել են տեղի միաբնակ բնակչության դավանափոխությանը, ուստի ընդլայնել են եկեղեցու այն տարածքը, ուր իրավունք ունեին կանգնելու «չմկրտվածները»: Այսպիսով, Ակոռիի եկեղեցու միջին՝ գմբեթատակ հատվածը տեղաշարժվել է դեպի Ավագ խորան՝ արևելյան մույթերը միաձուլելով վերջինիս հարթությանը, ինչի հաշվին էլ մեծացել է եկեղեցու արևմտյան հատվածը, կատարելով ապաշխարողաց գավթի դեր: Նույն նպատակին են ծառայել նաև հարավային և հյուսիսային դռները: Դրանք բացվել են անմիջապես դեպի գմբեթատակ տարածք՝ առանձնացնելով արդեն քաղկեդոնականություն ընդունած հավատացյալների մուտքը եկեղեցի: Դրանով նրանք զատվել են արևմուտքից մուտք գործող հայ առաքելական եկեղեցու հետևորդներից: Փաստորեն եկեղեցու կառուցվածքը ևս վկայում է շինության քաղկեդոնական բնույթի մասին: **Սակայն Ակոռիի զույգ ազատ կանգնած մույթերով գմբեթավոր եկեղեցու այս տիպը հետագայում՝ քաղկեդոնականության ազդեցության թուլացման պայմաններում, այլևս չի կիրառվել մինչև Զաքարյանների տիրապետության հաստատումը Հյուսիսային Հայաստանում:**

12-13-րդ դարերում կրկին ուժեղանում է քաղկեդոնականության ազդեցությունը Հայաստանում, ինչն առնչվում էր վրացական թագավորության հզորացման հետ: Ուստի՝ տվյալ պատմաշրջանում երկաբնակությունն առավել տարածված է եղել Հյուսիսային Հայաստանում: Դա մեծապես պայմանավորված էր վրաց արքունի աթաբեկ, քաղկեդոնականություն ընդունած Իվանե Երկայնաբազուկ Զաքարյանի գործունեության հետ: Զաքարե և Իվանե Երկայնաբազուկները թուրք սելջուկներից վերանվաճելով Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքների մեծ մասը, իրենց տիրապետության տակ են վերցնում ազատագրված հողերը՝ հիմնելով Զաքարյանների իշխանությունը:

Այս շրջանում քաղկեդոնականությունը, որ հարյուրամյակների ընթացքում դիմադրության էր հանդիպել Հայ Առաքելական եկեղեցու կողմից, ստանում է պաշտոնական կարգավիճակ՝ ունենալով հզոր պաշտպան ու հովանավոր ի դեմս Իվանե Երկայնաբազուկի: Բնականաբար, դավանափոխ եղած Զաքարյան տոհմի ներկայացուցիչները կանգնած են եղել իրենց նոր հավատքը խորհրդանշող տաճարի հորինվածքի ընտրու-

16 Տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 231:

թյան առջև:

Այս առումով հարկ է հիշել, որ հայկական ճարտարապետությանը միշտ էլ բնորոշ է եղել հետաքրքրությունը դեպի հին՝ ավանդական ձևերը, և բազմաթիվ են օրինակները, երբ ճարտարապետները կրկնել են դարեր առաջ մշակված հորինվածքները: Այսպես, Հռիփսիմեի տիպի կառույցները, որ ձևավորվել են 7-րդ դարում, հանդես են գալիս նաև 10-րդ դարում (Ախթամար, Վարագավանք)¹⁷: 10-րդ դարի Կարսի Առաքելոց եկեղեցուն տեսնում ենք 7-րդ դարի Մաստարայի տիպի հորինվածքների կրկնությունը¹⁸: Բագրատունիները նույն 10-րդ դարում Ասիում կառուցել են Գագկաշեն տաճարը՝ կրկնելով արդեն խոնարհված Զվարթնոցի ձևերը և այլն¹⁹:

12-րդ դարում քաղկեդոնականություն ընդունած Իվանե Զաքարյանը, հնարավորություն ունենալով կրկնելու բյուզանդական կամ վրացական ճարտարապետության՝ արդեն մշակված և նոր դավանանքի ծիսակարգին համապատասխանող ձևերն ու տիպերը, ընտրել է ավելի քան չորս հարյուր տարի առաջ Անաստաս Ակոռեցու կողմից կառուցված Ակոռիի եկեղեցու հորինվածքը, ինչը վկայում է նախնյաց ավանդույթներին հայ քաղկեդոնականների հավատարմության մասին: Թերևս դա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ ինչպես 7-րդ դարում, 12-րդ դարում նույնպես հայ քաղկեդոնականներն ունեցել են միննույն խնդիրը՝ հավատացյալ միաբնակ բնակչության դավանափոխությունը:

Ու քանի որ Զաքարյանների շնորհիվ Հայաստանում կրկին ազդեցիկ դիրքեր գրաված քաղկեդոնականությունը ոչ թե ընդօրինակել էր օտար հորինվածքները, այլ շարունակել 7-րդ դարում Հայաստանում տարածում գտած հայ քաղկեդոնական ճարտարապետության ավանդույթները, 12-րդ դարի վերջին և 13-րդ դարասկզբին Կուր գետի աջափնյա տարածքում հանդես է եկել գմբեթավոր եկեղեցու մի նոր հորինվածք՝ զույգ ազատ կանգնած մույթերով գմբեթավոր տիպը: Այն հիմնականում կառուցվել է նշված ժամանակահատվածում ու կենտրոնացել է քաղկեդոնականություն ընդունած Զաքարյաններին ենթակա տարածքներում: Կառույցների այս խումբը յուրահատուկ էր հատակագծային, ծավալատարածական, համաչափական ու դեկորատիվ լուծումներով: Ավելին՝ ինչպես վկայում է վրաց հետազոտող Ա. Զաքարիան, նմանատիպ այլ հուշարձաններ տվյալ ժամանակահատվածում, բացի Կուր գետից հարավ ընկած հատվածից, Վրաստանի այլ տարածքներում չեն հանդիպում²⁰:


Հայաստանում քննարկվող տիպը ներկայացված է **Աբորիի, Պղնձահանքի, Խուճապի և Կիրանց վանքի** եկեղեցիներով: Մերօրյա Վրաստանում նմանօրինակ տաճարներ են **Բետանիայի, Քվատախետվիի, Կինցվիսիի, Տինթեսուրանի, Փիտարեթիի, Ծուղրուղաշենի և Թբիլիսիի**

17 Տե՛ս А. Еремян, Храм Рипсима, Ереван, 1955, էջ 50–54: Տե՛ս նաև՝ Տ. Մարության, Ավանի տաճարը, Եր., 1976, էջ 108–117:

18 Տե՛ս «Հայկական ճարտարապետության պատմություն», հատ. 2, Եր., 2004, էջ 76:

19 Տե՛ս Թ. Թորամանյան, Զվարթնոց, Գագկաշեն, Եր., 1984:

20 Տե՛ս П. Закарая, Грузинская центрально-купольная архитектура 12–13 вв., Тбилиси, 1987, էջ 247–248:



Գծ. 3. Զույգ ազատ կանգնած մույթերով եկեղեցիների հատակագծեր


Լուրջի մոնաստերիի կառույցները²¹ (Գծ. 3):

Սակայն, նման հորինվածքի նախատիպը Ակոռիի 7-րդ դարի եկեղեցին է, որի համեմատությունն Աքորիի 12-րդ դարի Բգավոր եկեղեցու հետ ակնհայտ է դարձնում, որ երկու եկեղեցիներում կիրառված է միևնույն՝ «ոսկի հատման» հարաբերությունների վրա խարսխված՝ հայ ավանդական ձարտարապետության մեջ կիրառվող հարմոնիկ չափման համակարգը²² (Գծ. 4): Հատկանշական է ոչ միայն Ակոռիի եկեղեցու հորինվածքի, այլ նաև Մասեացոտն գավառի Ակոռի տեղանվան կրկնությունն ու տեղափոխումը նոր միջավայր՝ «Աքորի» ձևով: Նշենք, որ «Ակոռի» և «Աքորի» տարբերակները տարբեր ժամանակներում կիրառվել են երկու բնակավայրերում էլ²³: Անկասկած, երկու դեպքում էլ առկա

21 Տե՛ս В. Беридзе, Тбилисский “Лурджи монастыри”, ARS Georgica, 2, Тбилиси, 1948, էջ 91-110, 180-181:

22 Տե՛ս Н. Huntley, The divine proportion, New York, 1970, p. 60-65; И. Шевелев, Золотое сечение, М., 1990, էջ 34-50.

23 Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1, եր., 1986, էջ 141-142:



Գծ. 4: Ակոուի 7-րդ դարի և Աքրոուի Բգավոր եկեղեցիների համաչափական վերլուծություն


է նույն տեղանունը, որի ձևափոխությունը հետևանք է պարզ տառադարձության:

Այսպիսով՝ հայ քաղկեդոնական և նույնատիպ վրացական եկեղեցիների շարքում Աքրոուի Բգավոր եկեղեցու դերը կարևորվում է այն հանգամանքով, որ վերջինս նույնությամբ կրկնելով Անաստաս Ակոուեցու կողմից 7-րդ դարում կառուցված Ակոուի քաղկեդոնիկ եկեղեցու հատակագծային հորինվածքը (Գծ. 5), նախատիպ և օրինակ է հանդիսացել զույգ ազատ կանգնած մույթերով գմբեթավոր տիպի մի շարք եկեղեցիների համար:

Խմբի եկեղեցիներից յուրաքանչյուրը լուծված է յուրովի, սակայն հիմքում միևնույն կառուցվածքն է՝ տարբեր մեկնաբանություններով: Նման շինությունների շարքում իր նշանակությամբ առանձնանում է Պղծահանքի Ս. Աստվածածինը՝ կառուցված Իվանե Երկայնաբազուկի կողմից: Այստեղ առավել ցայտուն է արտահայտված հայ քաղկեդոնականների՝ սեփական պատմության ու մշակույթի իմացությունը, նվիրվածությունը ավանդույթների, ինչն առկա է ոչ միայն եկեղեցու հատակագծային հորինվածքում, այլ նաև համաչափական համակարգի ընտրության, ֆունկցիոնալ ու դեկորատիվ լուծումների և վերջապես հովհարածն վեղարի կիրառման մեջ²⁴:

Այսպիսով՝ քաղկեդոնականություն ընդունած Զաքարյան տոհմի ներ-

24 Ա. Զալալյան, Ախթալայի վանական համալիրի միանավ եկեղեցու ճարտարապետական հորինվածքն ու նշանակությունը, «Հայ արվեստի հարցեր», հատ. 4, Եր., 2012, էջ 154-161:



Գծ. 5: Աբորիի Բգավոր եկեղեցու վերակազմություն

կայացուցիչները, չկորցնելով իրենց ազգային նկարագիրը և հավատարիմ մնալով դարերով ձևավորված հայ ճարտարապետության ավանդույթներին, դրանք հետևողականորեն կիրառել և զարգացրել են Հյուսիսային Հայաստանում իրենց կողմից հիմնված նոր կառույցներում: Այրարատ նահանգի Մասեացուն գավառում 7-րդ դարում կառուցված Ակոռիի եկեղեցու և Աբորիի Բգավոր եկեղեցու կառուցվածքի նույնականությունը և նմանատիպ տաճարների լայն տարածումը Հյուսիսային Հայաստանում հայ քաղկեդոնական ճարտարապետության՝ հայկական մշակութային միջավայրի ծնունդը լինելու փաստի հերթական ապացույցն է:

Ալեքսանդր Ս. Զալալյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական միջնադարյան ճարտարապետությունը, մասնավորապես 12-13 դդ. հայ քաղկեդոնական իշխանների շինարարական գործնեությունը, հայ-վրացական առնչությունները, պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնումը:

ORIGIN OF THE TYPE OF DOMED CHURCHES WITH DOUBLE PILLARS IN ARMENIA AND GEORGIA

Alexander S. Jalalyan

ՄՇԱԿՈՒՅԹ

The 7th century church of Akori built by Catholicos Anastas Akoretsi in his native village is the kind of Armenian Chalcedonian building, which has a typical domed hall with a pair of free-standing struts in it. Its layout structure became a basis for a number of notable churches of 12–13th centuries built in North Armenia and Georgia.

Nowadays only the foundations of this Armenian Chalcedonian church (built in Masyatsoth region (gavar) of Ararat province) have remained, as the building was destroyed during the earthquake in 1840. Zakaryans, who have adopted chalcedony in the 12th century, had the opportunity to repeat forms and types of byzantine or Georgian architecture matching with rituals of their new religion, so they chose the structure of Akori church built by Anastas Akoretsi more than four hundred years ago, which proves the commitment of Armenian chalcedonians to ancestral traditions. It is significant that not only the structure of Akori church has been repeated, but also its name has been taken and put in the new environment as Akori (Աքորի).

Thus, the representatives of Zakaryan dynasty, which had adopted chalcedony, never lost their national identity staying true to Armenian architectural traditions of centuries and consistently applying them in their new structures in North Armenia.

Резюме

ПРОИСХОЖДЕНИЕ ВИДА КУПОЛЬНЫХ ЦЕРКВЕЙ С ДВОЙНЫМИ ПИЛОНАМИ АРМЕНИИ И ГРУЗИИ

Александр С. Джалалян

Զ (ԺԲ) քարթ, քիւ Յ (47) հայր-սեպրեմբր, 2014

Церковь 7-го века Акори построенная Католикосом Анастасом Акореци в родном селе является армянским халкедонитским строением, у которого типичный купольный зал с парой свободно стоящих колонн. Структура строения стала основой для целого ряда примечательных церквей 12–13 веков, построенных в Северной Армении и Грузии.

В настоящее время сохранились только основы этой армянской халкедонской церкви построенной в гаваре Масыцотн Айраратской области Великой Армении, так как здание было разрушено во время землетрясения 1840 года. У Закарян принявших халкедонство в 12 веке, была возможность повторить формы и типы строений византийской или грузинской архитектуры согласно ритуалам их новой религии. Но они выбрали

Չժ հայր-սեպրեմբրի հայր-սեպրեմբր

структуру церкви Акори, построенной Анастасом Акореци более четырехсот лет назад, что свидетельствует о приверженности армян-халкедонитов к исконно армянским традициям. Показательно, что была повторена не только структура церкви Акори, но и ее название было принято и перенесено в новую местность как Акори (Արորի).

Таким образом, представители династии Закарян приняв халкедонство не утратили свою национальную идентичность оставаясь верными традициям армянской архитектуры и последовательно применяя их в своих новых строениях на территории Северной Армении и Грузии.